Արձանագրություն N 3

ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար փողոցների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի շարունակություն

ք.Ծաղկաձոր 11 ապրիլի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Ն.Խաչատրյան /բացող /

Վ.Հայրապետյան /բացող/

Ա.Մեսրոպյան / գնահատող /

Է.Հովհաննիսյան /գնահատող/

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. **Մասնակցի կողմից ճշտված փաստաթուղթ ներկայացնելու մասին**

(Գ.Հայրապետյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ
Սահմանված ժամկետում <<ԷԼԻՏ ՍԹԱՐ>> ՓԲԸ-ն շտկել է հայտում ներառված փաստաթղթում արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացրել է Հավելված 2.1-ի ճշտված տարբերակը:
Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման >> կարգի 42-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց <<ԷԼԻՏ ՍԹԱՐ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

1.2 Նախնական տվյալներով՝

ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով ընթացակարգի **1-ին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **<<ԷԼԻՏ ՍԹԱՐ>> ՓԲԸ-ին** /ամենացածր գնային առաջարկ և հրավերի պահանջներին համապատասխանություն/:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **<<ՇԻՆՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին**

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 2-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Հայրապետյան

անդամներ՝ _____ Ա.Մեսրոպյան

_____ Ն.Խաչատրյան

_____ Վ.Հայրապետյան

_____ Է.Հովհաննիսյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան